

Զանգերի պատմությունը

Պայթեց մի անգամ ահավոր մի պատերազմ, կենաց ու մահու կռիվ: Երկու կողմից էլ անթիվ-անհամար զինվորներ ընկան:

Մենք կանգնած էինք այս կողմում, թշնամիները՝ հակառակ: Օր ու գիշեր մենք կրակում էինք մեկմեկու վրա, իսկ պատերազմը շարունակվում ու շարունակվում էր: Եկավ այնպիսի մի պահ, երբ մենք մնացինք առանց թնդանոթի բրոնզի ու սվինների:

Մեր գլխավոր հրամանատար գնդապետ Բոմբատո Պալբաստո Վորբեբեզկի-ի-Բաստան հրամայեց հանել զանգակատան բոլոր զանգերը, հալեցնել դրանք և ձուլել հսկայական մի թնդանոթ՝ այնքան մեծ, որ հնարավոր լինի մի կրակոցով շահել պատերազմը:

Հարյուր հազար վերամբարձ կռունկներ բարձրացրին այդ թնդանոթը, ութսունյոթ երկաթուղային կազմեր տեղափոխեցին այն դեպի ճակատ: Գնդապետը ուրախությունից ձեռքերն իրար շփեց ու ասաց.

-Ահա նայեք, բավական է իմ թնդանոթը կրակի, և թշնամին վախից լուսին կթռչի:

Վերջապես եկավ այդքան սպասված պահը: Թնդանոթը ուղղեցին թշնամու կողմը, իսկ մենք բոլորս բամբակով փակեցինք մեր ականջները:

Զե՞ որ դժոխային դրոշյունից կարող էին պայթել և՛ ականջների թմբկաթաղանթները, և՛ եվստախյան խողովակները:

Գնդապետ Բոմբատո Պալբաստո Վորբեբեզկի-ի-Բաստան հրամայեց.

-Կրա՛կ:

Հրետանավորը սեղմեց կրակող սարքը ու հանկարծ.

«Դին-դան-դոն»:

Ամբողջ ճակատով մեկ թնդաց, զրնգաց ու շաչեց զանգերի չտեսնված դողանջը:

Այստեղ մենք բացեցինք ականջները, համակ ուշադրությամբ հետևեցինք:

Ամպրոպի նման որոտաց թնդանոթը.

«Դին- դան-դոն»:

Սարերից ու ձորերից հարյուր հազարավոր ձայներով լսվում էր զանգերի դողանջի արձագանքը.

«Դին- դին- դան-դան-դոն-դոն-դոն»:

Գնդապետ Բուրաստո Պալբաստո Վրդեբեզկի-ի-Բաստան երկրորդ անգամ գոռաց.

-Կրա՛կ-կրա՛կ, սատանան տանի:

Հրետանավորը նորից սեղմեց կրակող սարքը:

Եվ կրկին խրամատից խրամատ սահեց ու լող տվեց տոնական դողանջը: Կարծես ոչ թե թնդանոթ էր որոտում, այլ զրնգում-երգում էին աշխարհի բոլոր զանգերը:

Այստեղ գնդապետը բարկությունից սկսեց պոկել մագերը: Պոկեց, պոկեց, մինչև որ գլխի վրա միայն մի մագ մնաց:

Հետո ամեն ինչ դադարեց, ու տիրեց լռություն: Եվ ահա մյուս կողմից՝ մեր թշնամիների խրամատներից՝ որպես կանչող կոչ, հանկարծ որոտաց խլացնող և ուրախ մի դողանջ.

«Դին-դան-դոն»:

Պետք է ասել, որ թշնամիների գլխավոր հրամանատար օբեր- բեյ- վսեխմեյստեր ֆոն Բուրախ Պալբախ Ռազդրոբի-վաս-վ-պրախը (ձեզ փշրող- մոխրացնողը) նույնպես մտածել էր ձուլել իր երկրի բոլոր զանգերը և դարձնել մի մեծ թնդանոթ:

Եվ սկսվեց.

«Դին-դան» որոտում էր մեր թնդանոթը:

«Դոն»- արձագանքում է թշնամունը:

Զինվորները դուրս թռան խրամատներից և վազեցին իրար ընդառաջ:
Վազում էին և պարում:

-Խաղաղություն, խաղաղություն,- գոռում էին նրանք:

-Զանգերը, լսո՞ւմ եք, զանգերը, տոն է, դողանջում են զանգերը- դա նշան է,
խաղաղություն:

Գնդապետը և օբեր- բեյ- վսեխմեյստերը վազեցին դեպի իրենց մեքենաները և
պուկ փախան:

Շատ հեռացան, հեռո՛ւ, հեռո՛ւ, իսկ զանգերի դողանջը լսվում ու լսվում էր:
Պարզ է, որ ամբողջ աշխարհում՝ ծովում, թե ցամաքում, չկա մի անկյուն, որտեղ
չհասան այդ զանգերի դողանջները: